# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

2016 թ. հունվարի 22-ին, թիվ 4-Ա

ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.5 կետի <<ա>> ենթակետով, 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1459-Ն որոշմամբ հաստատված հավելվածը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2009 թվականի հուլիսի 14-ի N 83-Ա կարգադրությամբ ստեղծված մոնիթորինգի և գնահատման աշխատանքային խմբի կողմից ներկայացրած Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015 թվականի աշխատանքային պլանի մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվությունը. ***որոշում ենք.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015 թվականի աշխատանքային պլանի մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի կողմից ներկայացված տարեկան հաշվետվությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015 թվականի աշխատանքային պլանի կատարողականը՝ համաձայն N 2 հավելվածի:

**Ս.ՍԱՀԱԿՅԱՆ**

# Արձանագրություն

**ՀՀ Արագածոտնի մարզային զարգացման հանձնաժողովի նիստի**

21.01.2016թ

Նախագահությամբ ՀՀ Արագածոտնի մարզպետ Ս. Սահակյանի

**ՕՐԱԿԱՐԳ՝**

ՀՀ Արագածոտնի մարզի 2015-2018 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015 թվականի տարեկան աշխատանքային պլանի մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում:

**ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝**

ՀՀ Արագածոտնի մարզային զարգացման հանձնաժողովը:
Մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբը:
Աշխատակազմի վարչության պետեր և առանձնացված ստորաբաժանումների պետեր:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

ՀՀ Արագածոտնի մարզպետ պարոն Ս. Սահակյանը:
Մարզպետի տեղակալ պարոն Մ.Աբգարյանը:
Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ պարոն Ի. Բարսեղյանը:
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի պատասխանատու աշխատակիցներ:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի 2015-2018 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015 թվականի աշխատանքային պլանի մոնիտորինգի և գնահատման հաշվետվությանը և ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության քննարկմանը:

**Ս.ՍԱՀԱԿՅԱՆ**